Medi-Cal ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2026 ԵՎ 2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Լավ լուր. Medi-Cal-ը ՉԻ փոխվի շատերի համար:

Ստորև նշված մարդիկ կարող են պահպանել Medi-Cal-ը՝ ատամնաբուժական ծառայություններով և առանց ամսական վճարների՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:

- Երեխաները (մինչև 19 տարեկան),
- Ներկայում և նախկինում խնամակալության տակ գտնվող երիտասարդները (մինչև 26 տարեկան), և
- Հղիները և հետծննդաբերական շրջանում գտնվողները (հղիության ավարտից հետո մինչև մեկ տարի):

Ի՞նչ փոփոխություններ են սպասվում Medi-Cal-ում և ո՞ւմ վրա են դրանք ազդելու:

2026 թ-ի հունվարի 1-ից սկսած ձեր տարիքը և ներգաղթյալի կարգավիճակը կորոշեն, թե ինչպիսի Medi-Cal կարող եք ստանալ:

Փոփոխությունների ժամանակացույց		Ու՞մ վրա կազդի*
2025թ. Դեկ. 31	**Ամբողջական Medi-Cal-ի համար դիմելու վերջին օրը, եթե դուք փաստաթղթեր չունեք և 19 տարեկանից բարձր եք:** Medi-Cal-ում արդեն գրանցված կամ Medi-Cal-ի համար 2026 թվականի հունվարի 1-ից առաջ դիմած անձինք կարող են պահպանել իրենց ապահովագրությունը եթե համապատասխանում են պահանջներին: Եթե ձեր ամբողջական Medi-Cal-ը որևէ պատճառով չեղարկվի, դուք կունենաք 90 օր այն վերականգնելու համար: Եթե 90-օրյա ժամկետը լրացել է, հնարավոր է, որ չկարողանաք վերադառնալ ամբողջական Medi-Cal-ին և ստանաք միայն արտակարգ իրավիճակների Medi-Cal :	Միայն փաստաթուղթ չունեցող չափահասները (19+)
2026թ. Հուն. 1	**Գրանցումը կսառեցվի՝** Փաստաթուղթ չունեցողները (19+), ովքեր կդիմեն Medi-Cal-ի համար 2026 թվի հունվարի 1-ից հետո, կստանան միայն արտակարգ իրավիճակների Medi-Cal:	Միայն փաստաթուղթ չունեցող չափահասները (19+)
2027թ. Հուլ. 1	**Ատամնաբուժական ապահովագրությունը կավարտվի՝** Medi-Cal-ը կդադարեցնի որոշ ներգաղթյալների համար նախատեսված լիարժեք ատամնաբուժական խնամքը: Արտակարգ ատամնաբուժական խնամքը, ինչպես նաև Medi-Cal-ի մյուս բոլոր առավելությունները, կընդգրկվեն «Ամբողջական Medi-Cal՝ առանց ատամնաբուժական խնամքի» փաթեթում:	Վերաբերում է միայն այն չափահասներին (19+), ովքեր՝ • Փաստաթուղթ չունեն • Ունեն Green Card (չեն ազատվել կամ չեն լրացրել 5 տարվա սպասման ժամկետը • DACA շահառուներ են • PRUCOL շահառուներ են**
2027թ. Հուլ. 1	**Ամսեկան ապահովագրության վճարները կսկսվեն՝ 19-59 տարեկան չափահասները, ովքեր գրանցված են «Ամբողջական Medi-Cal առանց ատամնաբուժական ծառայությունների» ծրագրում, պարտավոր կլինեն ամսական վճարել 30 ԱՄՆ դոլար: Եթե որևէ ամսվա վճար բաց թողնվի, նրանք կունենան 90 օր՝ վճարումը կատարելու և հետ մնացած գումարը մարելու համար:** Եթե 90 օրվա ընթացքում չվճարեք պարտքի ամբողջ գումարը, կկորցնեք ձեր «Ամբողջական Medi-Cal՝ առանց ատամնաբուժական խնամքի» փաթեթը, և կարող եք որակավորվել միայն «Արտակարգ իրավիճակների Medi-Cal»-ի համար (որը չի պահանջում հավելավճար):	Վերաբերում է միայն այն չափահասներին (19-59), ովքեր՝ • Փաստաթուղթ չունեն • Ունեն Green Card (չեն ազատվել կամ չեն լրացրել 5 տարվա սպասման ժամկետը) • DACA շահառուներ են • PRUCOL շահառուներ են**

[B] հետաձգվել է 2026-27 պետական բյուջեի պատճառով:

* Այս փոփոխություններից ազատված են 19 տարեկանից փոքր երեխաները, ներկայումս և նախկինում խնամակալության տակ գտնվող 26 տարեկանից ցածր երիտասարդները, ինչպես նաև հղիները և հետծննդաբերական շրջանում գտնվողները (հղիության ավարտից հետո մինչև մեկ տարի):

(continued)

** Ձեր ներգաղթյալի կարգավիճակի և Medi-Cal-ի համար համապատասխանության մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.healthconsumer.org/medi-cal-changes-and-what-you-need-to-know/ կայք:

Ապահովագրության տեսակները

Ամբողջական Medi-Cal	Ամբողջական Medi-Cal՝ առանց ատամնաբուժական խնամքի	Արտակարգ իրավիճակների Medi-Cal
Ծածկում է բոլոր անհրաժեշտ բժշկական ծառայությունները, այդ թվում: ✓ Կանխարգելիչ խնամք ✓ Բժիշկների և հիվանդանոցների այցեր ✓ Հոգեկան առողջության խնամք ✓ Ատամնաբուժական խնամք ✓ Դեղատոմսով դեղեր ✓ Երկարաժամկետ խնամք ✓ և ավելին	Ծածկում է բոլոր անհրաժեշտ բժշկական ծառայությունները, բացի ոչ շտապ ատամնաբուժական խնամքից. ✓ Կանխարգելիչ խնամք ✓ Բժիշկների և հիվանդանոցների այցեր ✓ Հոգեկան առողջության խնամք ✗ Ատամնաբուժական խնամք ✓ Դեղատոմսով դեղեր ✓ Երկարաժամկետ խնամք ✓ և ավելին Ստոմատոլոգիական խնամքը կծածկվի միայն արտակարգ իրավիճակներում, ինչպիսիք են՝ լուրջ ատամնացավը, բորբոքումները և ատամի հեռացումը:	Ծածկում է միայն ✗ Կանխարգելիչ խնամք ✗ Բժշկին կանոնավոր այց ✓ Միայն շտապօգնություն ✓ Հղիության վարում ✓ Երկարաժամկետ խնամք ✓ Դիալեզ ✗ Այլ ծառայություններ Արտակարգ իրավիճակների Medi-Cal-ը համապարփակ առողջապահական ապահովագրություն չէ:

Մի կորցրեք ձեր Medi-Cal-ը. կարևոր հիշեցումներ

Medi-Cal-ի համար դիմեք մինչև 2026թ. Հունվարի 1-ը, եթե դուք փաստաթուղթ չունեցող չափահաս եք՝ լիարժեք Medi-Cal ստանալու համար: Այդ վերջնաժամկետից հետո, փաստաթղթեր չունեցող չափահաս դիմորդների համար հասանելի կլինի միայն Արտակարգ իրավիճակների Medi-Cal-ը:

Ստուգեք ձեր փոստը, էլ. փոստը և հեռախոսը՝ ձեր շրջանի Medi-Cal գրասենյակից ստացված երկարաձգման ծանուցումների և հարցումների համար: Պատասխանեք ձեր Medi-Cal ապահովագրությունը պահպանելու բոլոր հարցումներին: Գրանցվեք SMS և էլ. փոստի հիշեցումների համար՝ այցելելով www.BenefitsCal.com կայքը:

Հնարավորինս շուտ կապվեք ձեր շրջանի Medi-Cal գրասենյակի հետ՝ երկարաձգման հետ կապված խնդիրները լուծելու համար: Գտեք ձեր շրջանի գրասենյակը՝ www.BenefitsCal.com/Help/find-an-office/HCCOL:

Medi-Cal-ին դիմելու համար.

- Անհրաժեշտ է միայն դիմորդի ներգաղթի կարգավիճակի մասին տեղեկություն:
- Ընտանիքի անդամները, որոնք չեն դիմում նպաստների համար, պարտավոր չեն տրամադրել սոցիալական ապահովության համար (SSN) կամ ներգաղթյալի կարգավիճակը:
- Դուք կարող եք դիմել և գրանցվել Medi-Cal-ում առանց Սոց. համարի:

Ու՞մ հետ պետք է խոսեմ, եթե հարցեր ունեմ իմ ներգաղթյալի կարգավիճակի վերաբերյալ:

Խոսեք վստահելի մասնագետի հետ: Մասնագետ գտնելու համար այցելեք bit.ly/CDSSLSP կայք:

Medi-Cal-ը և Ներգաղթի Հսկողությունը

Տեղեկությունների համար այն մասին, թե ինչպես կարող է Ձեր Medi-Cal-ի ինֆորմացիան փոխանցվել ներգաղթի հսկողության մարմիններին այցելեք bit.ly/HCAPrivacy կայք:

Ունե՞ք այլ հարցեր: Քանի որ Medi-Cal-ին և ներգաղթյալներին վերաբերող քաղաքականությունը կարող է շարունակվել փոխվել, դիմեք Սպառողների Առողջապահական Դաշինք (**Health Consumer Alliance),** որպեսզի պարզեք, թե արդյոք դուք համապատասխանում եք Medi-Cal-ում ներգաղթյալների գրանցման մասին գաղտնի տեղեկատվություն ստանալու պայմաններին: Ձեր տարածքում գործող ՍԱԴ (HCA) ծրագրի համար զանգահարեք անվճար հեռախոսահամարով՝ **1-888-804-3536**, այցելեք **www.HealthConsumer.org** կայք, կամ սկանավորեք QR-ը:

Last updated 7/12/2026